

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հ Կոտայքի մարզի Գողթ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

«Հ Կոտայքի մարզի Գողթի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-1) :

1. Գլխավոր մասնագետը՝

- աշխատակազմի քարտուղարի համաձայնությամբ ապահովում է ֆինանսատնտեսական բնագավառի գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր նախապատրաստելը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր մշակելը
- իր կողմից մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մասին առաջարկություններ է ներկայացնում քարտուղարին.
- անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
- ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.
- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
- Գլխավոր մասնագետը՝ կատարում է իր պարտականությունները իր լիազորությունների սահմաններում այն է հաշվապահության վարում:
- կազմում է համայնքի բյուջեի նախագիծը, իրականացնում հաշվապահական հաշվառում
- կազմում է տեղական տուրքերի եւ վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը
- համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագիծ է ներկայացնում
- ապահովում է բյուջեի միջոցների նպատակային օգտագործումը.
- ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը:
- մշակում է առաջարկություններ ֆինանսատնտեսական բնագավառին առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրության կիրառման պրակտիկայի և կատարելագործման վերաբերյալ
- վարում է գույքի, պարտավորությունների և տնտեսական գործառնությունների հաշվապահական հաշվառումը
- Հաշվապահական հաշվառման մատյանների (ռեգիստրներ) վարում
- Բյուջետային ծախսերի նախահաշիվների կատարման մասին ներկայացնում է եռամսյակային և տարեկան հաշվապահական հաշվետվություն սահմանված ժամկետներում
- տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ

բ) ունի «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Բյուջետային համակարգի մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

**Մրցույթը կկայանա 2020թ. ապրիլի 1-ին, ժամը 12:00-ին, Գողթի համայնքապետարանում:**

**Փաստաթղթերի ներկայացման վերջին ժամկետն է 17.03.2020թ, մինչև ժամը 18:00:**

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս)

- տվյալ պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին:
- արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին
- մեկ լուսանկար 3x4 սմ չափի
- անձնագրի պատճենը

Փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով:

**Փաստաթղթերը ընդունվում են Գողթի համայնքապետարանի աշխատակազմում, հեռ. 096 33 32 32 կամ ք. Հրազդան, Կենտրոն վարչական շենք, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀՇՀ բաժնում, հեռ. 0223 2 34 13, ժամը 10<sup>00</sup>-ից մինչև 18<sup>00</sup>-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:**